

Ca M
89.9

80e

Ս. ՄԳԱԼՈԲԼԻՇՎԻԼԻ

ԴԱՊԻՏԱՅԻ ԳՈՂԵ



ՊԵՏԱՐԱՏ

899.962.15
5-41

899.962.45
5-41

Ս. ՄԳԱԼՈՅԻՇՎԻԼԻ

2011-07

ՂԱՂԻՏԱՅԻ ԳՈՂԸ

Նկարները Ս. ՄԱՒՍԱՇՎԻԼԻ
Թարգմանեց Վրացերենից ԱՐՄ. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

Թ Ե Տ Հ Ր Ա Տ
ՀՀԿՅԵՄ ԿԿ ԿԲ ՍԱՆԿՊՈՒՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

Ղաղիտան Փրոնե գետի ափին յեզիպտացորեն ուներ ցանած։ Հուլիսի վերջն եր յեզիպտացորենը վոստավորվել եր և անուշ շշունջ ու շրջուն եր հանում։ Ղաղիտան փայտատով արտն այնպես եր մաքրել, վոր մարդ մեկ-մեկ կհամարեր յեզիպտացորենի ցողունները, վորոնք փարթամացել, գլուխները վեր եյին պարզել առատորեն վոստակալել ու վոսկե գանգուրները գզզելու եյին տալիս չարաճճի հովին։ Ղաղիտայի այս ուրախ արտի աջ կողմից անցնում եր ջրաղացի առուն. առվի մյուս կողմը գտնվում եր մի այգի. ձախ կողմում, գետի մոտերքում, կանգնած եր. մի հսկայական ընկուղենի, վորի ստվերը մեղմորեն ընկնում եր արտի վրա։ Ընկուղենին վերևից նայում եր գետին. նրա ձյուղերից մեկը մոտենում եր Փրոնեյի ալիքներին, քամին կուացնում եր ճուղը և ջրերին զարկում. կաթիլներով պատած տերևները կարծես ասեղնագործած ձեռագործ լինեյին։ Փրոնեն իր սակավ, բայց խելառ ջրերով հարվածում եր այն պատին, վորի կողքով բարձրացել եր ընկուղենին. ընկուղենու տակ ջուրը պտտվում եր ու գոյացնում մի լճակ, վորը գյուղի յերեխաները լողարան եյին դարձրել։

— Քավոր Ղաղիտան, արտը ջրելը չպրծանը, — ձայն տիին հարեւան այգուց։

Ղաղիտան ձեռքը ճակատին հովանի անելով այն կողմը նայեց։

— Այ վորտեղ վոր ե՝ ծայրը կհամնեմ, — ասաց Ղաղիտան։

— Յերեկ սկսեցիր և մինչև հիմա ինչ յեղափ։ Յերևի դժվար ե ջրվում։

— Ի՞նչ ասել կուղե, — բահին հենվելով պատասխանեց Ղաղիտան իր հարեւանին. — դժվար չե, հայր ու վորդություն զիտենա, բայց ուժու ել իր տեղը չե. ծերությունը ծանր բան է։ Յերբ վոր քո հասակին եյի, այսչափ հողը մի վայրկյանում շուռ կտայի, բայց հիմա ինչ կարող եմ անել, — ասաց ծերունին՝ գլուխը շարժելով։



59518-66



Հակ ս թրջելք Ո՞հ, յես քո բար ու բերքին մատաղ. չի
ծփացել որհնածը. աստծու աշքն և պտտվում այս քո արտում,
քավոր, աստծու աշքը:

Հիացմունքի սարսուռ անցավ Ղաղիտայի մարմնով, և սիրտն
ուրախությունից շարժվեց. նոր առու բացելով կռացած մեծքն
ուղղեց և սիրալիր կերպով նայեց շնչացող արտին:

Այստեղ գեռ ելի վոչինչ, ասաց ուրախացած սրտով Ղա-
ղիտան.—հապա մի ընկուզենու կողմն անցիր. խոպան եր, այս տարի
բահեցի: Այնպիսի յեգիպտացորեն ե, վոր ձիավորն ել կղժվարանա
միջով անցնել. մարդու բազկի չափ վոստեր ե բռնել:

Գիտես, քավոր, յես առուն կհասցնեմ մինչև ծայրը... ել
բան չի մնում, իսկ հետո կտանեմ իմ արտը. մի շաբաթ ե, ջրվոր-
ների հետևից եմ ընկել:

Տար, վորդիս, յես ինչ արգելողն եմ. ջուրն աշխարհինն ե:
Ղաղիտայի մկրտության անունն ուրիշ եր, բայց գյուղն ինչ
վոր մի անգամ այս անունն եր տվել: Նրա մկրտության անունը
վոչ վոք ել չգիտեր. միշտ «Ղաղիտա» եյին կանչում և իրենք ել
չգիտեյին, թե ինչու եյին այդպես կանչում: Ղաղիտան ծեր եր,
մոտ վաթսուն տարեկան, տանն ուներ չսրս հաստիկ աղջիկ, ինչպես
ինքն եր ասում, չորսն ել իրար հետևից հասած, ասես չորսն ել
պատրաստ, ամուսնության համար հասունացած աղջիկներ:

Ղաղիտան միջահասակ եր, մեջքից կռացած, ասես աղեղ լիներ:
Հիանալի դեմք ուներ. միշտ մաքուր սափրած յերեսին տարածվել
եյին սպիտակ ու լայն բեխերը: Իսկ յերկար ու սպիտակ մազերը
միշտ մաքուր սանրած ու հավաքած եյին լինում ծոծրակի մոտ,
ու յերկար, վրան սև շթի վաթաթան կապած: Նա արտի մեջտե-
ղում մի բարձր վայտ եր ցցել, վորի գլխին դրել եր հին, սև
գլխարկը՝ վրան զցել ծվեն-ծվեն դարձած, կապույտ սատինե շա-
պիկը: Այգու դեմ ու դեմ կոճղերի վրա շինած ուներ մի խրճիթ,
վորն արտին նայում եր վերից:



Ղաղիտան վերջացրեց ջրելը, Նստեց առվի ափին, գլխի փաթաթանն արձակեց, յերեսն առվի մեջ լվացավ և թաց սանրով մազերը սանրեց: Հետո բարձրացավ խրճիթը, վորին հենված եր միտանի սանդուխը: Նստել ե Ղաղիտան խրճիթում: Թասի մեջ սառն աղբյուրի ջուր ե ածել, վորն այնտեղ, ընկուզենու մոտերքում եր խոխոջում, մեջը գցել ե շոգից չորացած հացը, թրջում ե և ոտում: Ծամում ե ծուլորեն ծերունի Ղաղիտան, վորը մի թեսվ հենվել ե ծալված վոտին, իսկ մյուս ձեռքը թասի մեջ ե դրել և հացն ե փշրում:

— Հապա, ո՞վ ավելի շուտ կհանվի, ով, — վազում եյին յերեխաները գետա լճակի կողմ իրար հետ վիճում՝ գոտիկներն արձակելով:

Աղմուկի վրա Ղաղիտան գլուխը խրճիթից հանեց, իսկ մի ձեռքը թասի մեջ մնաց՝ հաց հանելու համար: Յերեխաները վազեցին ընկուզենու տակ, շտապ հանվեցին և բարձունքից նետվեցին ջուրը: Աղմուկ բարձրացավ: Յեղեգնուտն ու այգիները խինդ առան: Նախապաններն ել կեսորին տավարը գետափը բերին զովացնելու:

— Յեփրեմ, հապա մի արի, այս ընկուզենու ճյուղով անցնենք ու այնտեղից սուզվենք ջուրը, — ասաց Միխան:

— Անցնենք... Դե, հա. սպասի, այ տղա, միասին ցատկենք: Սողացին ընկուզենու վրայով և անցան այն ճյուղով, վորը հենց Ջրի վրա յեր տարածված: Միխան ընկուզենուց նայեց արտին և նրա մեջ խժուելու ցանկություն զարթնեց, յեգիպտացորենի վոստերը միանգամից հափշտակեցին նրան. մոռացավ, վոր ընկուզենու վրա յե նստած և լողանալու յե պատրաստվում:

— Անցիր, այ տղա, ինչ ես շշմել, — և Յեփրեմը ձեռքով նրա վզակոթին տվեց:

— Այ տղա, Յեփրեմ, ինչ վոստեր ե բռնել, հա. ով չքաղի, նա մարդ չի:

Գնա, այ բալմ, ին որվանը չվնի: Ինձ վոստեր քաղել տվիր և քիչ մնաց մայրս խեղեր. ատում եր՝ գողացած յեգիպտացորեն ինչու ուտեցրիր ինձ:



— Դու վոր թանակեր լինես, ով ե մեղավոր, ով բա բերանում լեզու չունեյիր, կասեյիր՝ մեր արտիցն եմ քաղել... գիտես, վոր լողանանք—պըճնենք, սպասենք. ժողովուրդը մի կողմ կքաշվի, այն ժամանակ ծածուկ ներս կմտնենք:

Յեփրեմը գայթակղվեց, թեև մի քանի վայրկյան վարանման մեջ եր: Գլխով համաձայնության նշան արեց Միխային: Սկյուռների պես վազ տվին ճյուղով և նայեցին ջրապտույտին:

— Դե, տղերք, նայեցե՞ք՝ ով ավելի յերկար կմնա սուզված...

— Յեփրեմ, արի, ելի միասին նետվենք,—կանչեց Միխան:

Տակն ու վրա արին ջուրը, վորը գյուղի տղաներով լցվեց. Վոմանք մենամարտում եյին, վոմանք հեծնում գոմեշները, վորոնք պառկել եյին լճակի մեջ և հաճույքով պոչերն եյին շարժում: Յեփրեմը շատ եր սիրում անասուն տանջել. գոմեշներից պոկ չեկավ. մերթ բռնում եր պոչից, վորով նա ջրին եր զարկում և ջուրը շաղ տալիս դեմքին, մերթ պողերից եր կախվում: Ամբողջ տավարը տեղահան արեց:

— Այ տղա, ի՞նչ անհանգիստն ես յեղել, հանգիստ թող գոմեշներին,—հանդիմանեց նախրապանը, վոր նստած եր մոտիկ թմբին.—Ելի. հանգիստ թող, թե չե այնպես կհասցնեմ այս ճիպոտը, վոր «վայ մայրիկ» կլանչես:

Յեփրեմը հեռու կանգնեց, գետնից քար վերցրեց ու սպառնաց.

— Այնպես ճղեմ այդ գլուխդ այս սրածայր քարով, վնր...

Այստեղ նախրապանը վեր թուավ տեղից: Յեփրեմը հոհոցով ջուրը նետվեց և սուզվեց բաղի պես:

— Այդպիսի բանե՞ր են սովորեցնում քաղաքի ձեր դպրոցում, հայ-

Արևը միջորեյից թեքվեց, շամանդաղ բարձրացավ: Նախրապանները տավարը ստվերուտ տեղից դուրս քշեցին և տարան դաշտն արածացնելու: Ամեն ինչ իր տեղը քաշվեց: Ղաղիտան ել մեկնվեց և անուշ քուն մտավ: Յեփրեմն ու Միխան հարմար ժամանակ գտան. աղվեսի պես վզները յերկարացրին, զգույշ քայլերով գաղտագողի մտան յեգիպտացորենի արտը, գրպաններն ու ծոցերը լցրին, դուրս յեկան յեղեգնուտը և նեղ արահետով հեիհե տուն փախան:



Յեփրեմի հայրը միջին կարողության տեր ազնվականի վորդի յեր: Իր այս մի վորդուն դպրոց եր տվել, մյուսներին ել նախապատրաստում եր: «Յեթե այս ժամանակ մարդ ուսում չստանա, վատ կլինի նրա բանը, հաց ճարել չի կարող», — հաճախ ասում եր կյանքի փորձ ունեցող Նիկոլով Աբուլաձեն՝ Յեփրեմի հայրը:

Այն իրիկունը, յերբ Յեփրեմը Ղաղիտայից յեգիպտացորենի վոստեր գողացավ, Նիկոլով Աբուլաձեն պատշգամբում գորդ եր փոել տվել և վրան պառկել: Նրա կինը նստած եր դռան շեմքին. յերեխաները հավաքվել եյին մոր շուրջը. փոքրիկ տղան մոր հյուսերից եր կախվել, սողալով բարձրանում եր մեջքին և անուշ-անուշ համբուրում նրան ու փաղաքշում: Մայրը ձայն չեր տալիս, ասես վորդու փաղաքշանքը չեր զգում:

Յեփրեմը դուրս բերեց տաք-տաք յեգիպտացորենը և յուրաքանչյուրին մի-մի հատ տվեց: Հայրը վրա նստեց պառկած տեղից, վերցրեց յեգիպտացորենը և սկսեց ուտել:

— Սիդո՛, Սիդո՛, — կանչեց Յեփրեմն իր փոքրիկ քրոջը. — գե՛, դու ել աղ ածա. աղով այնքան համեղ ե, վնր...


— Չե, վորդիս, խարում ե. կհազացնի, մայրդ քեզ մատաղ:

— Իւ, բան ասաց. հազացնի, չե մի բան. աղով ավելի լավ կմարսի, — ասաց հայրը:

— Ինչ ուզում եք, արեք. հորով-վորդիներով համառ եք. մարդ հո՛ չի կարող ձեզ բան հասկացնել:

Բավական մթնեց, բայց ծագող լիալուսինը ցըեց գիշերվամթությունը և աշխարհը ճերմակացրեց: Իր շողքը սյուն առ սյուն ցած թողեց գեղի յեղեգնուտն ու այգիները և հազար գույնի փայլ տվեց նրանց: Փրոնեյի առանց այն ել զուլալ ջուրն սկսեց ավելի թափանցիկ գառնալ:

Բնության այս պայծառությունն ու գողտրիկությունն ավելի գեղեցկացնում և շուք եր տալիս սայլի ճոճոցն ու հետն ել անուշ սայլերզը, վորը սայլորդն աղավսու պես կլկացնում եր սրտառուշ կերպով, գալարում եր խարսղանն ու արագորեն շրփացնում լծկան յեզներին:



Յեփրեմի հայրը նորից թեք ընկավ մութաքայի վրա և հիա-
նում եր ընության հրաշալիքներով։

Սիդո, Սիդո, նայիր, նայիր, լուսինը վոնց ե վազում։ Մայրիկ,
այն փոքրիկ աստղը, վոր գնում ե նրա հետևից պլառալով, նրա
փորդին ե, այդ լուսնի վորդին, — հարցրեց փոքրիկ տղան։

— Վոնց վոր մեր ձիու հետևից քուռակն ե գնում, այնպես ե
հետևից ընկել, — ավելացրեց Սիդոն։

— Վորդի, չե մի բան, այ, այն մեկը լուսին ե, իսկ մյուսը՝
նրա աստղը։ Լուսնին վորդի ով ե տվել, — խոսակցությանը խառ-
նըվեց Յեփրեմը։

— Հայրիկ, ճիշտ ե, վոր ասում են, թե յերբ յերկինքը բաց-
վում ե ու աստված ձեռքը ցած ե մեկնում, ով վոր այդ տեսնի,
այդ բոպեյին ինչ վոր ցանկանա, աստված կտա նրան, — հարցրեց
Սիդոն հորը և չոքեց նրա առջե։

— Սուտ ե վորդիս, քեզ պես պարապ-սարապներն են հնարել։

— Բացվի, չե մի բան, ուսուցին ասաց մեզ, վոր այն, ինչ
վոր տեսնում ենք և յերկինք ենք անվանում, ամբողջովին ոդ ե,
արել, լուսինը և աստղերը կախված են հենց ոդում, — ասաց
Յեփրեմը յեգիպտացորենի վոստը կրծելով։

— Սիդոնյա, աղջի, դու ինչ կցանկանաս, յեթե յերկինքը
բացված տեսնես, — հարցրեց հայրը։

— Աստված, ինձ այնպիսի ուսումնական դուրս բեր, վոնց վոր
մերոնց կատոն ե։

— Հմ, հա, հա, — հրհուացին ծնողները, — դպրոց կտանք, վորդիս,
և կտեսնենք...

Այդ ժամանակ ներքելից լսվեց վոտնածայն, ձեռնափայտի
թրիկոց և ինչ-վոր բանի շրջուն։ Յեկվորը մերթ ընդ մերթ հա-
զում եր։ Ով ել վոր եր, սանդուխքի մոտ կանդ առավ... Պատշգամ-
բում գրույցն ընդհատվեց։ Փոքրիկ յերեխաները դեպի սանդուխքի
դուռը վազեցին։

— Քավոր Նիկոլազ, տանն եք, — լսվեց մի ձայն ներքելից։

— Վա, Ղաղիտա, դժւ յես, բարձրացիր, կնքահայր, բարձրացիր
վերև։



Ծերունի Ղաղիտան ձեռնափայտին հենվելով սանդուխքով
բարձրացավ: Նա շալակին ուներ յեզիպտացորենի ցողունների մի
մեծ կապոց, վորը պատշգամբի հատակին դցեց. գլխարկը թևի տակ
դրեց և ձեռքերը խաչած կանգնեց: Մեջքը լուսնի կողմն եր դարձ-
րել. կոացած Ղաղիտայի ստվերն ընկավ պատշգամբին: Նրա ա-
ռանց այն ել սպիտակ մազերը լուսնի շողքի տակ պեծին եյին
տալիս: Ղաղիտան կանգնած եր անշարժ, աչքերն արյունալի ար-
ցունքներով լցվեցին, կոկորդը ներսից ինչ-վոր բան սեղմեց և հա-
զիվ հազ շշնչաց.

Բարի յերեկո ձեզ:

Ղաղիտայի դեմքը Յեփրեմին կասկածանքի մեջ դցեց. այս ու
այն կողմ անցավ, բայց աչքերն այնպես մթնեցին, վոր այլևս
ճանապարհ չգտավ: Սառը քրտինքը բռնեց նրան: Այրող բոցի պես
ինչ-վոր բան անցավ նրա մարմնով, կաս-կարմիր կտրեց: Յեզիպ-
տացորենի վոստը, վորը դեպի բերանն եր տանում, ոդում մնաց:
Ղաղիտայի վշտալից դեմքը, նրա ճերմակ մազերը և կոացած
մարմինը Յեփրեմի սիրտը վառեցին:

Ի՞նչ կասես, Ղաղիտա. այս կապոցն ինչ ե նշանակում:

— Միք նզովի ինձ, ձեզ մատաղ. ինչպես գիտեք, կես որավար
յեզիպտացորեն ունեմ յեղեղնուտում, իմ դառը քրտինքով, իմ
ձեռքով բահած: Մեջն արյուն-քրտինք եմ կաթեցրել: Մի՛ յեզիպ-
տացորեն ե, վոր աստծու աչքը մեջն ե պտտվում: Ծածուկ ներս
են մտել, ձեզ մատաղ, այս ձեր վորդի Յեփրեմն ու ձերոնց Մի-
խան: Նոր եր ջրված... Իմ կնոջ և մանր յերեխաներիս մեղքը թող
չվերցնեն: Այս մեկն աստծուն ել պարտ մնամ և դրանց ել նե-
րում եմ հանուն հոր և վորդո:

Յեփրեմի համար, վոր գետինը պատովեր ու մեջն ընկներ,
ավելի գերադասելի յեր: Այրվում եր ամոթի կրակից, միանգա-
մայն քարացավ տեղում, այլևս շնչավոր եյակի նշույլ անգամ
չուներ:

— Ամոթ քո պատվին, հա, — վրա բերին ծնողները. — քեզնից
մյու եյինք սպասում:

— Զե, իմ արել, յես մեղավոր չեմ. Միխան հիմարացրեց ինձ՝
Յեփրեմի աչքերից արցունքներ թափվեցին, սկսեց հեկեկար
և ընկավ Ղաղիտայի առջև:

Պատ. խմբագիր՝ Գ. Ղազարյան
Տել. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Մբրագրիչ՝ Ա. Արդուշանյան



Քլավուսի լիազոր՝ Ղ.-4598 Հրատարակ. 4155.
Պատվեր 1, Տ.լրաժ 5000
Թուղթ 72×105. Տպադրական 21/2 մամ.
Մեկ ժամուլում 15 552. Նիշ. Հեղինակային 1/3 մամ.
Հանձնված և արտադրության 5 ոդքսուսի, 1937 թ.
Սարքագրված և տպագրելու 9 մարտի, 1938 թ.
Գիրը 1 ռ. 60 կ.

Պետհրատի 1 տպարան, Ենթական, Լենինի 65

«Ազգային գրադարան»



NL0383979

14054

163

ԳԻՒՐ 1 Խ. 65 4

ՀՊՄ

899.9625
899.9625
0-41

ՏԵՂ

գործ շեմի

1406-38

1

1 դրամ տարբեր

С. МГАЛОБЛИШВИЛИ
ВОР КАКИТЬ
РИЗ. АРМ. ССР. ЕРЕВАН